ՆԱԽԱԳԾԻ ԶԵԿՈՒՅՑԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

- PDF, **առավելագույնը 15 ՄԲ**
- Առավելագույնը 20 միակողմանի (10 երկկողմանի) էջ՝ ներառյալ հավելվածները, բայց չներառելով տիտղոսաթերթը, բովանդակության ցանկը և գործածված աղբյուրների ցանկը
- **Նկատի առեք, որ ավելի երկար զեկույցները հաշվի չեն առնվելու դատավորների գնահատման ժամանակ:**

	Տարրական	*Կրտսեր/ավագ*
Տիտղոսաթերթ		
Բովանդակության ցանկ		
Թիմի ներկայացում	*առվ. 1 էջ*	*առվ. 1 էջ*
Մեզ մի փոքր ներկայացրեք ձեր թիմը: Ովքե՞ր են նրա անդամները: Որտեղի՞ց եք: Ինչպե՞ս եք բաշխել աշխատանքը թիմում: Ավելացրեք ձեր թիմի որևէ լուսանկար:		
Նախագծի գաղափարի ամփոփ ներկայացում	*առվ. 1 էջ*	*առվ. 1 էջ*
Նկարագրեք ձեր նախագիծն ու ռոբոտաշինական լուծումը ամփոփ շարադրանքով: Տվեք այն բոլոր տեղեկությունները, որոնք պետք է իմանան ձեր ընթերցողներն ու գլխավոր շահագրգիռ կողմերը: • Ի՞նչ խնդիր է ձեր նախագիծը լուծում, և ինչո՞ւ եք ընտրել այդ խնդիրը: • Ինչպե՞ս է պատրաստվում ձեր ռոբոտաշինական լուծումը լուծել ձեր ընտրած խնդիրը: • Ո՞րն է ձեր ռոբոտաշինական լուծման արժեքը: Ի՞նչ կպատահի, եթե այն գործածվի իրական կյանքում: • Ինչո՞ւ է ձեր նախագիծը կարևոր:		
Ռոբոտաշինական լուծման ներկայացում	*առվ. 15 էջ*	*առվ. 12 էջ*
Նկարագրեք ձեր ռոբոտաշինական լուծումը և թե ինչպես եք այն մշակել: Ընդհանուր կետեր • Ինչպե՞ս հանգեցիք այս գաղափարին: Ուրիշ ի՞նչ գաղափարներ էիք քննարկում: • Գտե՞լ եք առկա նմանատիպ գաղափարներ: Ի՞նչն է ձեր գաղափարում տարբեր: Տեխնիկական կետեր • Նկարագրեք լուծման մեխանիկական կառուցվածքը: • Նկարագրեք լուծման ծրագրավորումը: • Մշակման ընթացքում բախվե՞լ եք խնդիրների: Նկարագրեք՝ արդյոք ձեր նախագծում օգտագործել եք ԱԲ-ի որևէ գործիք, եթե այո ո՞ր ԱԲ համակարգերն եք կիրառել, ինչ նպատակով և ինչ ծավալով (ձեր զեկույցում, տեսանյութում, ռոբոտի մոդելում կամ որևէ այլ մասում)		
Սոցիալական ազդեցություն և նորարարություն	*առվ. 3 էջ*	*առվ. 6 էջ*
Նկարագրեք ձեր լուծման ազդեցությունը հասարակության վրա: Ո՞ւմ է այն օգնելու: Ինչո՞վ է այն կարևոր: Բերեք կոնկրետ օրինակ, թե ինչպես կամ որտեղ կարող է ձեր գաղափարը գործածվել: (Մտածեք, թե ով կարող է այն գործածել և որքան մարդու այն կարող է օգտակար լինել):		
Միայն կրտսեր և ավագ տարիքային խմբերի համար Նկարագրեք ավելին ձեր նախագծի նորարարական ու ձեռնարկատիրական կողմերի մասին (տեսեք գնահատման չափանիշները): Դուք կարող եք գործածել բիզնես մոդելի հենք՝ բացատրելու համար ձեր նախագիծը որպես սկսնակ ձեռնարկության (ստարտափի) գաղափար: Պարտադիր չէ, որ լրացնեք այս հենքի բոլոր մասերը . կարող եք լրացնել միայն այն մասերը, որոնք, ըստ ձեզ, վերաբերում են ձեր նախագծին: https://en.wikipedia.org/wiki/Business_Model_Canvas: Ավելացրեք ձեր ռոբոտաշինական լուծմանն առնչվող բիզնես մոդելի հենք: Դրանում լրացրեք գոնե հետևյալ բաժինները՝ «Հաճախորդներ», «Գին» և «Եկամուտ»:		
Գործածված աղբյուրների ցանկ		
Կազմեք հետազոտության համար ձեր գործածած բոլոր փաստաթղթերի և *վստահելի* կայքերի ցանկը՝ ներառյալ այն մարդկանց, որոնց հետ խոսել եք ձեր նախագծի թեմայով:		

World Robot Olympiad and the WRO logo are trademarks of World Robot Olympiad Association Ltd.
©2026